տղին զտուն ևս այրեցին։ Զվէզիրն յաւուրս յայսոսիկ իջուցին, յաքսորս ուղարկեցին. յետ սակաւ աւուրց զէնկիչէրոց աղան ևս յաքսորս առաքեցին...։

Գերյարգութեան ձերում

Ցամի տեառն 1752.ին
յուլիսի 10 չուէ
[Կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Միքայէլ Վ.

ՃԿԱ.

Պատմական հարուստ տեղեկութիւններ կու տայ մեզ Հ. Միքայէլի հետևեալ թուղթը։

Նախ՝ Օսմանեան պատմութեան մէջ Եաղուպ աղայի ունեցած մեծ դերը և ապա եղերական վախճանը — հանդերձ լայն ծանօթութիւններով անոր կենաց մասին — կու գան կարևոր պակաս մը լրացնել մեր ազգային պատմութեան մէջ, զայս ճոխացը-նելով նորագոյն մանրամասնութիւններով։ Նշանաւոր դեր մ՝ունեցած է նաև Եա-ղուպի արենակից ու մեղսակից հարազատն Ցակոբ։

Վաւերագրիս մէջ կը յիշատակուին Եաղուպի հետ իբրև գլխատուողներ՝ «Ղզլար աղա և ծառայ սորա սուլէյման աղա»։ Առաջինն է Պէշիր ներքինապետը, և եր-կրորդը՝ Սուլէյման անուն վրացի գերի մը, որ անօրէն գործիք մ՝եղած էր ներքի-նապետի ձեռքին մէջ։

Գերյարգելոյ Աբրայ Հօրդ մերոյ Տեառն տեառն Ստեփանոսի վարդապետի

... Մինչ այն հրակիզութիւնք ստէպ եղեն ի յապստամբից և չնչմունք գոյր թէ զթագաւորն վերցնել կամին, կարդացնողքն ևս յայս միտ էին, թագաւորն թէպտիր գնաց առ ամենայն կարդացողս գլխաւորս, և զմիտ նոցա իմացաւ, և զդատախազութիւնն նո-ցա որ առաւել էր առ ղզլար աղան, և առ ծառայ նորին սուլէյման աղան և առ ար-բանեակ սոցին, ի հայոց ազգէ եաղուպ աղան։ Ասացեալ են. Եթէ զսոսա վերցնես, դու կարես մնալ, եթէ ոչ՝ դու ևս ոչ կարես կալ։ Եւ հաւատացուցին ինքեան, եթէ զսոսա բառնաս, կաս մնաս մեր թագաւորն ես։ Ուստի թագաւորն փութով և յանկարծ ի գի-շերի զղզլար աղան ի ղզղուլէն ուղարկեալ անդ գլխատեցին, և զգլուխն ի յառաւօտեան ի հրապարակի արքունական պալատին ձգեցին ի տեսութիւն ամենից, և զծառայ սորին զսուլէյման աղան ի հրապարակի գլխատեցին. և զեաղուպն կալան եղին ի տանջանս տասն օր. ջեռուցեալ թաս ի գլուխն և զայլ անդամս այլ տանջանօք, մինչև տեղեկա-նալ ամենայն արարից, ընչից, ապարանից, հաշուից. ապա և զսա իբրու կիսամեռ գլխատեցին. և յետ երից աւուրց դահճի տուեալ զարծաթ հայք տարեալ թաղեցին զհո-տեալ մարմինն. զսորին զամենայն ինչ, այսինքն զպալատասարաս տունս, զձիանս, զարդարանս, և զգանձ ի յարքունիս առին. և զայս ամենայն տեսեալ տաճիկք, ափշեալ ասէին. քեայֆիր փատիշահմը օլմուշմըսն։... Եաղուպն չորս ամ յառաջ չօպան օղլի սառաֆին խզմէթքեար էր, խալայեխ մի ունէր, զոր տուեալ է նմա ղզլար աղան, որ լեալ է քոյր սուլէյմանին. չօպան օղլին զայս խալայեխս եայղուպին ի կնութեան տուեալ է, զոլով քոյր սուլէյմանին, ղզլար աղան զսուլէյմանն խիստ սիրելով, զեաղուպն այս-քան բարձրացնելոյն սուլէյմանն լեալ. գրեթէ թագաւորութիւնն այն ինքեանք վարէին։ Եաղուպին մէկ տնէն եօթանասուն արապայ կահ և կարասիք հանեցին, որ ի պալաթ էր, 100 քսակ արժող տունն։ Նոյն գունակ պէշիկտաշու տունն, և ի տանէն ելեալն, և ի խանէն ելեալ գանձքն։ Միլիոններ ասեն ղզլար աղային և սուլէյմանին, գանձք, ոսկի և արծաթ, ակունք, և ականակուռ ոսկեղէնք և արծաթեղէնք. զարդք և հագուստք